



Արմինե ՄԵԼԻՔՍԵԹՅԱՆ

*իրավաբանական գիտությունների թեկնածու,
ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության
ֆակուլտետի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի դոցենտ,
Արդարադատության ակադեմիայի ունկնդիր*

ՊԱՏԱԿԱՆ ՀԱՅԵԳՈՂՈՒԹՅՈՒՆԸ ԶՐԵԱԻՐԱՎԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ ԿԻՐԱՈՒՄԸ

Ռատական հայեցողությունն ուսումնասիրելու համար նախևառաջ անհրաժեշտ է ելնել դրա բնորոշումից: Արդի հայերենի բացատրական բառարանում հայեցողությունը նշանակում է ներքին մտավոր գնություն, դատողություն, դատելը, դատողականությամբ որոշելը, այս կամ այն կերպ ընտրելը, տնօրինելը¹: Միջազգային աղբյուրներում հայեցողությունը բնորոշվում է որպես տարբեր իրավիճակներում տարբեր որոշումներ կայացնելու հնարավորություն²:

Իրավագիտության մեջ հայեցողությունն անձին տրված հնարավորությունն է՝ մի քանի այլընտրանքային որոշումներից ընտրելու մեկը, երբ մյուս այլընտրանքները կամ օրինական են: Հետևաբար, դատական հայեցողությունն օրենքով դատարանին տրված լիազորությունն է՝ ընտրելու հնարավոր բոլոր օրինական որոշումներից մեկը:

Դատական հայեցողությունը որոշ չափով կարող է իր մեջ կամայականություն պարունակել, սակայն դատարանի հայեցողական լիազորությունն ամբողջովին վերացնել հնարավոր չէ, և դրա համար կան մի շարք պատճառներ: Նախ՝ հաշվի առնելով հասարակական զարգացումները՝ օրենսդիրն օբյեկտիվորեն հնարավորություն չունի նորմատիվ ակտերով կարգավորելու բոլոր հասարակական հարաբերությունները, ուստի որոշ նորմեր կրում են հարաբերական բնույթ, և դրանց կիրառումը կոնկրետ իրավիճակներում կախված է իրավակիրառի հայեցողությունից: Երկրորդ՝ հայեցողության

շնորհիվ հնարավորություն է ստեղծվում երկարացնելու օրենքների կյանքը և այն համապատասխանեցնել գործող կենսապայմաններին³: Եվ վերջապես՝ դատական հայեցողությունը հնարավորություն է ստեղծում նաև որոշ չափով հաղթահարելու օրենսդրական տեխնիկայի անճշտությունները:

Շատ հաճախ դատարանը, գնահատելով գործի բոլոր հանգամանքները, պարզում է, որ ունի տարբեր որոշումներ կայացնելու հնարավորություն, ընդ որում՝ բոլոր որոշումներն էլ օրինական են: Երբ կա ընդամենը մեկ որոշում ընդունելու հնարավորություն, ապա տվյալ պարագայում հայեցողությունը բացակայում է: Հայեցողությունը բացակայում է նաև այն ժամանակ, երբ կա օրինական և ապօրինի որոշում կայացնելու հնարավորություն, քանզի տվյալ դեպքում դատարանը պարտավոր է ընտրել օրինական որոշումը:

Կախված ընտրության հնարավորությունից՝ դատական հայեցողությունը կարելի է հարաբերականորեն դասակարգել մեղ և լայն հայեցողության: Հայեցողությունը գնահատվում է որպես մեղ, երբ կա երկու որոշումներից մեկը ընտրելու հնարավորություն, իսկ լայն հայեցողության դեպքում դատարանը կարող է բազմաթիվ հնարավոր օրինական որոշումներից ընտրել մեկը:

Քրեաիրավական նորմեր կիրառելիս դատական հայեցողությունը խիստ սահմանափակ է՝ հաշվի առնելով քրեական օրենքն անալոգիայով կիրառելու արգել-

ՀՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ 2019 7 - 8 (241-242)

ՊԱՏԱԿԱՆ
Իշխանություն

քը և քրեական օրենսգրքի խիստ նորմատիվ բնույթը: Այլ օրենսգրքերի համեմատ ՀՀ գործող քրեական օրենսգրքում սակավ են նաև իրավալիազորող նորմերը: Պետք է փաստել նաև այն, որ ՀՀ նոր քրեական օրենսգրքի նախագծի⁴ պայմաններում իրավալիազորող նորմերի թիվը զգալիորեն կրճատվել է: Քրեական իրավունքում դատական հայեցողության սահմաններն էլ ավելի են նեղանում՝ հաշվի առնելով դատական նախադեպը կիրառելու հանգամանքը:

Այնուամենայնիվ, դատական հայեցողությունը քրեական իրավունքում ևս անխուսափելի է՝ պայմանավորված մի շարք գործոններով: Նախ՝ իրավալիազորող նորմերի առկայությունն արդարացված է հասարակության անընդհատ զարգացումով, բացի այդ, որոշ նորմերի տեխնիկական-իրավաբանական անկատարությունը⁵ թույլ չի տալիս դրանք կիրառել առանց դատական մեկնաբանման: Քրեական իրավունքում դատական հայեցողության գոյությունն ինչ-որ չափով պայմանավորված է նաև օրենսդրական անորոշության խնդրով: Այս առումով Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր՝ 2004 թվականի դեկտեմբերի 21 վճռում (Busiuc v. Moldova), արձանագրվել է, որ թեև օրենքում որոշակիությունը մեծապես ցանկալի է, սակայն դա կարող է հանգեցնել չափազանց կոշտության, և օրենքը պետք է կարողանա հարմարվել փոփոխվող հանգամանքներին, հետևաբար, շատ օրենքներ անխուսափելիորեն ձևակերպվում են այնպիսի հասկացություններով, որոնք քիչ թե շատ անորոշ են, և որոնց մեկնաբանությունն ու կիրառումը պրակտիկայի խնդիր է: Բացի դրանից՝ ՀՀ Սահմանադրական դատարանն իր՝ ՍԳՈ-747 և ՍԳՈ-780 որոշումներում դիրքորոշում է հայտնել, որ օրենքներում օգտագործվող առանձին հասկացությունների բովանդակությունը, բնորոշ հատկանիշների շրջանակը ճշգրտվում են ոչ միայն օրինաստեղծ գործունեության արդյունքում, այլ դա-

տական պրակտիկայում:

Քրեական իրավունքում դատարանը կարող է հայեցողական մոտեցում դրսևորել արարքը որակելիս (հատկապես գնահատողական կատեգորիաների առկայության դեպքում), իրավալիազորող նորմերը կիրառելիս, օրենսդրական խութեր կամ բացեր ունեցող նորմերը մեկնաբանելիս և պատիժ նշանակելիս, ընդ որում, դատարանը համեմատաբար լայն լիազորություն ունի պատիժ նշանակելիս՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ պատիժները ՀՀ քրեական օրենսգրքում նախատեսված են հարաբերական որոշակի կամ երկընտրելի սանկցիաների ձևով: Սակայն տվյալ դեպքում ևս դատարանի հայեցողությունը սահմանափակված է սանկցիայի նվազագույն և առավելագույն շեմերով, ինչպես նաև պատիժ նշանակելու սկզբունքներով և առհասարակ քրեական իրավունքի սկզբունքներով, այսինքն՝ քրեաիրավական նորմը չպետք է ընկավի որպես առանձին, քրեական օրենսգրքի ընդհանուր կարգավորման տրամաբանությունից դուրս դրույթ, հակառակ պարագայում կարող է առաջանալ թյուրընկալում դատարաններին վերապահած «բացարձակ» հայեցողական լիազորությունների վերաբերյալ⁶:

Ինչպես արդեն նշվեց, դատական հայեցողությունը մի քանի հնարավոր որոշումներից հարաբերականորեն ազատ ընտրություն կատարելն է: Այդ ընտրությունը կատարվում է՝ ելնելով օրենքի նախադրյալներից և առաջնորդվելով սուբյեկտիվ համոզմունքով: Համաձայն «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգրք» սահմանադրական օրենքի 7-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «Դատարանը գործը կամ հարցը քննում և լուծում է Սահմանադրությանը և օրենքներին համապատասխան՝ գործի հանգամանքները գնահատելով իր ներքին համոզմամբ (ընդգծումը մերն է Մ. Մ.)»: Պետք է փաստել նաև այն, որ դատարանի համոզմունքը բացարձակ սուբյեկտիվ բնույթ չի կրում, այն ձևա-

ՀՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ 2019 7 - 8 (241-242)

ԴԱՏԱԿԱՆ
Իշխանություն



վորվում է քրեական գործի բոլոր հանգամանքները մանրամասն ուսումնասիրելով և վերլուծելով: Այսինքն՝ դատարանը չի կարող մեխանիկորեն ընտրել այս կամ այն որոշումը, այլ որոշումներից մեկի ընտրությունը պետք է կատարվի՝ ելնելով արդարամտությամբ⁸, բարեխղճության, խելամտության, նպատակահարմարության և բարոյականության չափանիշներով: Պլատոնը գտնում է, որ օրենքը կիրառողները պետք է լավ դաստիարակված լինեն օրենքի ոգով⁹: Կարծում ենք, դատարանը, որպես անձի իրավունքների և ազատությունների երաշխավոր, ցանկացած որոշում կայացնելիս նախևառաջ պետք է առաջնորդվի իրավունքի գերակայության ապահովման սկզբունքով:

Տեսական գրականության մեջ հաճախ է քննարկվում՝ արդյոք դատարանը սահմանափակված է իր կողմից նախկինում ընդունված որոշումներով: Այս առումով կարծում ենք, որ դատարանը քրեաիրավական նորմեր կիրառելիս կաշկանդված չէ նախկինում իր կողմից ընդունված որոշումներով և յուրաքանչյուր դեպքում, հաշվի առնելով հասարակության մեջ տեղի ունեցած փոփոխությունները, գործի յուրահատկությունը կարող է այլ որոշում կայացնել, բանգի, ինչպես նկատել է Թոմաս Հոբսը, դատարանն ամեն անգամ օրենքը մեկնաբանում է յուրովի¹⁰: Չարգացնելով այդ միտքը՝ նա գրում է, որ դատավորի դատավճիռն այս կամ այն դատավորին չի հարկադրում այդպիսի դատավճիռ կայացնել նաև հետագայում համանման դեպքում¹¹: Իսկ Իսրայելի դատավոր Ահարոն Բարակը, անդրադառնալով դատարանի կողմից նախկինում կայացրած նախադեպը հաղթահարելուն, նշել է, որ դատարանն ունի ընտրության հնարավորություն՝ պարտադրված չլինել հետևելու այդ նախադեպին կամ հետ չկանգնել դրանից, սակայն այդ ընտրությունը նա պետք է կատարի խելամտորեն¹²: Տեսական գրականության մեջ կարծիք կա, այն մասին, որ որպեսզի դատավորը ճիշտ մեկնաբանի և կիրառի

օրենքը, պետք է բարձրացնել դատավորի ինքնուրույնությունը և անկախությունը¹³:

Նույնն է նաև ներկայիս օրենսդրության պահանջը, այսպես՝ համաձայն «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասի, յուրաքանչյուր ոք իր գործի քննության ժամանակ որպես իրավական փաստարկ իրավունք ունի վկայակոչելու նույնանման փաստերով այլ գործով Հայաստանի Հանրապետության դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտում առկա օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի մեկնաբանությունները: Դատարանն անդրադառնում է նման իրավական փաստարկներին:

Դատական հայեցողությունը, հատկապես առաջին ատյաններում, կարող է սահմանափակվել ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումներով: Սակայն ցածր ատյանների դատարանները որոշ դեպքերում կարող են և չկիրառել Վճռաբեկ դատարանի դիրքորոշումները՝ հաշվի առնելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ և ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 8 հոդվածի 4-րդ մասում սահմանված հետևյալ դրույթը՝ նույնանման փաստերով այլ գործով Վճռաբեկ դատարանի կողմից իրավական նորմի մեկնաբանությունից տարբերվող մեկնաբանության դեպքում դատարանը պետք է հիմնավորի օրենքի և այլ նորմատիվ իրավական ակտի՝ Վճռաբեկ դատարանի մեկնաբանությունից շեղվելը: Տեղին է մեջ բերել նաև Եվրոպայի դատավորների խորհրդատվական խորհրդի (այսուհետ՝ ԵԴԽԽ) 2017 թվականի թիվ 20 կարծիքը «Օրենքի միատեսակ կիրառության մասին դատարանների դերի մասին», համաձայն որի, անկախ նրանից նախադեպը համարվում է իրավունքի աղբյուր, թե ոչ, պարտադիր է, թե կամընտիր, նախորդ որոշումներից օգտվելու հնարավորությունը հզոր գործիք է դատավորի

ձեռքում, ինչպես ընդհանուր իրավունքի, այնպես էլ քաղաքացիական իրավունքի երկրներում: Սակայն, ինչպես փաստում է ԵԴԽԽ-ն, հարատևող հակասությունը տարբեր դատարանների և հատկապես Գերագույն ստյամի դատարանների որոշումների միջև կարող է հանգեցնել ՄԻԵԿ-ի¹⁴ 6-րդ հոդվածի 1-ին կետով սահմանված արդար դատաքննության պահանջի խախտման:

Ինչպես արդեն նշվել է, դատարանը կարող է հայեցողական մոտեցում դրսևորել գնահատողական տարր պարունակող քրեաիրավական նորմեր կիրառելիս: Թեև գնահատողական հանցակազմերով քրեաիրավական նորմերի մեկնաբանությունը կատարվում է դատական հայեցողության շրջանակներում, սակայն պետք է փաստել, որ այդ հայեցողությունը սահմանափակված է օրինականության, հիմնավորվածության, արդարացիության չափանիշներով: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն իր դիրքորոշումներում¹⁵ բազմիցս անդրադարձել է դատական հայեցողությանը: Այդ մոտեցումներն արտացոլվել են նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումներում¹⁶: Մասնավորապես, պատիժը մեղմացնող հանգամանքներ նախատեսող քրեաիրավական նորմը կիրառելիս դատարանի հայեցողությունը սահմանափակված է ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ Պ. Բայրամյանի վերաբերյալ 2007 թվականին կայացրած որոշմամբ, որում դատարանն իրավական դիրքորոշմամբ հստակեցրել է, որ ՀՀ քրեական օրենսգրքի 62 հոդվածով չնախատեսված որևէ հանգամանք որպես մեղմացնող հանգամանք հաշվի առնելու համար այն պետք է ողջամտորեն նվազեցնի անձի կամ նրա կատարած արարքի հանրային վտանգավորությունը: Նույն դիրքորոշումը վերահաստատվել է նաև ՀՀ Վճռաբեկ դատարանի մի շարք այլ որոշումներում¹⁷:

Ամփոփելով՝ կարելի է եզրակացնել, որ քրեական իրավունքում դատական հայեցողությունը կարող է վերաբերել

փաստին, այսինքն՝ դատական հայեցողության մի քանի փաստերից ընտրվում են նրանք, որոնք կարող են էական նշանակություն ունենալ գործով որոշում կայացնելուն, հայեցողությունը կարող է վերաբերել նորմին, այսինքն՝ հնարավոր մի քանի քրեաիրավական նորմերից հայեցողությանը ընտրվում է այն նորմը, որը ենթակա է կիրառման, ինչպես նաև դատական հայեցողությունը կարող է վերաբերել մեկ քրեաիրավական նորմի շրջանակներում տարբեր որոշումներ կայացնելուն: Վերջին դեպքում նորմում թվարկված են լինում իրավակիրառի գործողությունների մի քանի հնարավոր դրսևորումները, և կոնկրետ նորմի շրջանակներում ինչ որոշում կայացնի, որոշում է իրավակիրառը:

Կարևորելով դատական հայեցողության դերը՝ միաժամանակ կարծում ենք, որ հատկապես քրեաիրավական նորմեր կիրառելիս խիստ լայն դատական հայեցողության նախատեսումն արդարացված չէ: Որպեսզի հայեցողությունը չվերածվի կամայականության¹⁸, կարծում ենք, որոշակի օրենսդրական սահմանափակումներ պետք է լինեն, որը հնարավորություն կտա նաև ապահովելու օրենքի միատեսակ կիրառումը, ինչն էլ իր հերթին նախադրյալներ կստեղծի «կանխատեսելի արդարադատություն» իրականացնելու համար: Հատկապես լայն հայեցողությանը է դատարանն օժտված ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածով («Պատիժը պայմանականորեն չկիրառելը») նախատեսված քրեաիրավական նորմը կիրառելիս, որը դատարանին հնարավորություն է տալիս պատիժը պայմանականորեն չկիրառելու, եթե հանգում է հետևության, որ դատապարտյալի ուղղվելը հնարավոր է առանց պատիժը կրելու: Այս ինստիտուտը կիրառելիս օրենսդրական օբյեկտիվ սահմանափակումները վերաբերում են միայն պատժատեսակին, այսինքն՝ դատարանը կարող է ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածով նախատեսված նորմը կիրառել



միայն կալանքի, ազատագրկման և կարգապահական գումարտակում պահելու ձևով պատիժ նշանակելիս: Պատահական չէ, որ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածի միատեսակ կիրառում ապահովելու ակնկալիքով ՀՀ Վճռաբեկ դատարանը կայացրել է վեց տասնյակից ավելի որոշումներ, ինչն իր հերթին վկայում է, որ օրենքը խիստ անորոշ է: Նման իրավակարգավորման պայմաններում տեսականորեն հնարավոր է (թեև եզակի դեպքեր կան մաս իրավակիրառ պրակտիկայում), որ անձի նկատմամբ նշանակված ազատագրկման ձևով պատժի ժամկետը նույնիսկ գերազանցի փորձաշրջանի առավելագույն ժամկետը (հինգ տարի), սակայն դատարանը պատիժը պայմանականորեն չկիրառի և նշանակելով փորձաշրջանի թեկուզև առավելագույն ժամկետը, հետևություն անի, որ անձը կարող է ուղղվել առանց պատիժը կրելու: Ավելին՝ ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածում, ի թիվս այլ պատժատեսակների, նշված է ազատագրկումը, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի 49-րդ հոդվածի մեկնաբանությունից պարզ է դառնում, որ ազատագրկումը, որպես առանձին պատժատեսակ, նախատեսված չէ, այլ որպես պատժատեսակներ

նախատեսված են որոշակի ժամկետով ազատագրկումը և ցմահ ազատագրկումը: Քանի որ օրենսդիրն օգտագործել է «ազատագրկում» ընդհանրական տերմինն առանց այն կոնկրետացնելու, ստացվում է, որ չի բացառվում մաս ցմահ ազատագրկման դեպքում պատիժը պայմանականորեն չկիրառելու հնարավորությունը, այսինքն՝ տեսականորեն հնարավոր է, որ դատարանը, հաշվի առնելով հանցավորի անձը, հետևություն անի, որ նույնիսկ ցմահ ազատագրկման դատապարտված անձը կարող է ուղղվել առանց պատիժը փաստացի կրելու:

Կարծում ենք՝ կարելի է օրենսդրորեն նախատեսել մաս այլ օբյեկտիվ չափանիշներ, որոնք հնարավորինս կսահմանափակեն դատարանի հայեցողական լիազորությունը պատիժը պայմանականորեն չկիրառելիս, մասնավորապես՝ նպատակահարմար ենք համարում ՀՀ քրեական օրենսգրքի 70-րդ հոդվածում նախատեսել դրույթ այն մասին, որ պատիժը պայմանականորեն կարող է չկիրառվել միայն ոչ մեծ և միջին ծանրության հանցանքներ կատարած անձանց նկատմամբ¹⁹:

(Շարունակելի)

¹ Տե՛ս Է. Բ. Ադայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Երևան, 1976 թ., էջ 811:
² Տե՛ս Isaaks. The limits of Judicial Discretion// Yale L.J. 1922, N 32, O. 339:
³ Տե՛ս Конграшов П.Е., О пределах усмотрения правоприменителя в процессе принятия уголовно-правовых решений, М., 1987, էջ 27:
⁴ Տե՛ս <https://www.e-draft.am/projects/496/about>, վերջին այցելությունը՝ 05.03.2019 թ.:
⁵ Ինչպես նշում են տեսաբանները, քրեական օրենսդրության անկատարությունը ևս պայմանավորում է դատական հայեցողության գոյությունը, ինչն էլ իր հերթին նպաստում է ոչ միատեսակ դատական պրակտիկայի ձևավորմանը: Այս մասին առավել մանրամասն տե՛ս Гитинова М.М., Проблема

судейского усмотрения в уголовном праве при назначении уголовного наказания, Вестник ВГУ. Серия: Право, 2016, էջ 224:
⁶ Այս մասին առավել մանրամասն տե՛ս Գ. Գանիելյան, Իրավական որոշակիության, իրավունքի անալոգիայի (համանմանության) եվ իրավական ակտի մեկնաբանության փոխհարաբերության արդի հիմնախնդիրները, http://ysu.am/files/01G_Danielyan-1476101269-.pdf, վերջին այցելությունը 05.03.2019 թ.:
⁷ Պետք է ընգծել այն հանգամանքը, որ սուբյեկտիվ համոզմունքով առաջնորդվելը համարվում է դատարանի անկախության անքատելի տարրը:
⁸ Արդարամտությունն ըստ հին հռոմեական իրավունքի նշանակում է մարդու բնական և կայուն կանքը յուրաքանչյուրին տրամա-

րել իր իրավունքները <http://www.law.edu.ru/doc/document.asp?docID=1219314>, վերջին այցելությունը 05.03.2019 թ.:

- ⁹ Տե՛ս Платон, Законы, М., 1999 г., էջ 201:
- ¹⁰ Տե՛ս Гоббс Т., Сочинения, том 2, М., էջ 214:
- ¹¹ Տե՛ս նույն տեղում, էջ 215:
- ¹² Տե՛ս Аарон Барак, Судейское усмотрение, Перевод с английского, М., Издательство НОРМА, 1999, էջեր 312-313:
- ¹³ Տե՛ս Մ. Գ. Խաչատրյան, Գ. Մ. Խաչատուրյան, Դատավորի կարգավիճակը Հայաստանի Հանրապետությունում (իրավահամեմատական վերլուծություն), Երևան, 2002 թ., էջ 134:
- ¹⁴ Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պատպանության մասին Եվրոպական կոնվենցիա, ընդունված 1950 թ., ՀՀ-ում օժի մեջ է մտել 2002 թ.:
- ¹⁵ Տե՛ս mutatis mutandis, «Tyrer v. the United Kingdom» գործով 1978 թվականի վճիռը, «Seoring v. the United Kingdom» գործով 1989 թվականի վճիռը:
- ¹⁶ Տե՛ս օրինակ, ՀՀ Վճռաբեկ դատարանի 2012 թվականի որոշումը Հ. Դավթյանի վերաբե-

րյալ:

- ¹⁷ Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի 2010 թվականի որոշումը Է. Պետրոսյանի և Վ. Էլոյանի վերաբերյալ, 2009 թվականի որոշումը Կ. Հայրապետյանի վերաբերյալ:
- ¹⁸ Իսրայելի դատավոր Սհարոն Բարակը գտնում է, որ դատական հայեցողության սահմաններում որոշում կայացնելիս ամեն դեպքում դատարանը հենվում է իր անձնական փորձի և դատական աշխարհընկալման վրա: Առավել մանրամասն տե՛ս Аарон Барак, Судейское усмотрение, Перевод с английского, М., Издательство НОРМА, 1999, էջ 3:
- ¹⁹ Հարցի նման իրավակարգավորման պայմաններում դիտավորյալ հանցագործությունների պարագայում նշանակված ազատագրկման ձևով պատժի ժամկետը (առավելագույնը 5 տարի) չի կարող գերազանցել փորձաշրջանի ժամկետը, բացի այդ, կրացառվի պատիժը պայմանականորեն չկիրառելու ինստիտուտի կիրառումը ցման ազատագրկման դատապարտված անձի նկատմամբ:



RESUME - РЕЗЮМЕ

THE JUDICIAL DISCRETION IN THE APPLICATION OF CRIMINAL LEGAL NORMS

Armine Meliksetyan

PhD, Associate Professor at the Chair of Criminal Rights and Criminology, Academy of Educational Complex of the RA Police, listener of Academy of Justice

The article deals with the problems of judicial discretion in the application of criminal legal norms. Based on the analysis of current legislation the author concludes the imperfection of Criminal Code, and judicial discretion is considered as one of the solutions of this problem. Judicial discretion in the application of criminal legal norms is not absolute as it has some limits. In particular, it is limited by law.

Keywords: *criminal legal norm, judicial discretion, law enforcer, sanction, judge, law.*

СУДЕЙСКОЕ УСМОТРЕНИЕ ПРИ ПРИМЕНЕНИИ УГОЛОВНО-ПРАВОВЫХ НОРМ

Армине Меликсетян

*Кандидат юридических наук,
доцент кафедры уголовного права и криминологии Академии Образовательного
комплекса Полиции РА, слушатель Академии юстиции*

В статье рассматривается проблема судебного усмотрения при применении уголовно-правовых норм. На основе анализа действующего Законодательства РА мы делаем вывод о несовершенстве уголовного кодекса, и судебское усмотрение рассматриваем как один из путей решения данной проблемы. Судейское усмотрение при применении уголовно-правовых норм не является абсолютным, например, оно ограничено законом.

Ключевые слова: *уголовно-правовая норма, судебское усмотрение, правоприменитель, санкция, судья, закон.*

Բանալի բառեր - *քրեաիրավական նորմ, դատական հայեցողություն, իրավակիրառ, սանկցիա, դատարան, օրենք:*

Ա. Մելիքսեթյան - իրավաբանական գիտությունների թեկնածու, ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի իրավագիտության ֆակուլտետի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի դոցենտ, Արդարադատության ակադեմիայի ունկնդիր, էլ. փոստ՝ arminemeliksetyan81@gmail.com

Ներկայացվել է խմբագրություն՝ 06.08.2019, տրվել է գրախոսության՝ 06.08.2019, երաշխավորվել է ՀՀ ոստիկանության ակադեմիայի պետ, ոստիկանության գեղապետ, իրավ. գիտ. թեկնածու, դոցենտ Գ. Գրիգորյանի կողմից, ընդունվել է տպագրության՝ 26.09.2019

ՀՈՒԼԻՍ - ՕԳՈՍՏՈՍ 2019 7 - 8 (241-242)

ԴԱՏԱԿԱՆ
Իշխանություն